

# Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1111-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՈՐՈՇՈՒՄ

----- 2024 թ. № ----- -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 1111-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ  
և 37-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի № 451-Ն որոշման հավելվածի  
13-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ  
ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական  
ծառայության 2022 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու  
մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2022  
թվականի հուլիսի 21-ի N 1111-Ա որոշման հավելված 1-ի.
  - 4-րդ կետի 2-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել,
  - 7-րդ կետը շարադրել նոր՝ հետևյալ խմբագրությամբ.

«7. Մինչև ուսումնառության ավարտը՝ 2028 թվականի ծմեռային զորակոչը,  
տալ տարկետում հետևյալ անձանց՝

1) Տիգրան Մամիկոնի Հարությունյան (ծնվ.՝ 23.08.2004 թ., հաշվառման վայրը՝  
Արագածոտնի մարզ, գյուղ Նորաշեն 8 փող., տուն 4, Մ. Հերացու անվ.  
պետական բժշկական համալսարան): Նվաճումը՝ Հայաստանի  
Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն  
որոշման հավելվածի 7-րդ կետ.

2) Մարկ Արմանի Սարգսյան (ծնվ.՝ 20.07.2004 թ., հաշվառման վայրը՝ ք. Երևան,  
Օրբելի 6, բն. 120, Ցինխուլայի համալսարան): Նվաճումը՝ Հայաստանի  
Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն  
որոշման հավելվածի 9.1-ին կետ:»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ